ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 293

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ N 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՀԵՐՈՍ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՊԱՏՎՈ ԱՆԿՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 46-րդ հոդվածի 2- րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով մասնագիտական առաջարկություն ***որոշում եմ.***

1.Հոկտեմբերի 7-ին՝ Նոր Հաճն համայնքի N 3 հիմնական դպրոցում կայանալիք Արցախյան 44-օրյա պատերազմի հերոս նահատակներ՝ Վահագ Աբրահամյանի, Արսեն Ազիզյանի, Նարեկ Խաչատրյանի հիշատակին նվիրված Պատվո անկյան բացման արարողության միջոցառման մասնակցության համար հատկացնել համայնքի 2021 թվականի բյուջեի գործառական դասակարգման 08.2.4 <Այլ մշակութային կազմակերպություններ> տնտեսագիտական դասակարգման 4239 <Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ> հոդվածից 24950 դրամ:

2. Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բաղալյանին ապահովել միջոցառման ֆինանսավորումը՝ ըստ հաստատված նախահաշվի:

3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի հարցերով առաջատար մասնագետ Հ.Սիմոնյանի վրա:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2021 թ. Հոկտեմբեր 07
ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ, ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50, Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հոկտեմբերի 2021 թվականի N 294

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈԴՎԱԾԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017թ. փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով համայնքի թվով քսանմեկ բնակիչների դիմումները և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1 <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածից 485000 (չորս հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով դրամական օգնություն ցույց տալ սոցիալապես անապահով անձանց՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս. Բաղալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:
3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի Ժ/պ Էդգար Խամբաբյանի վրա:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

07.10.2021թ.
ք. Նոր Հաճն

ՀԱՎԵԼՎԱԾ

Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2021 թվականի հոկտեմբերի 7-ի N 294 որոշման

ՑԱՆԿ
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԱՆՁԱՆՑ

h/h	Անուն Ազգանուն	Գումարի չափը (ՀՀ դրամ)
1.	Պարթև Հովհաննիսյան	50000
2.	Գայանե Մկրտչյան	50000
3.	Ինեսսա Սարգսյան	30000
4.	Անժելա Շախբազովա	30000
5.	Վերոնիկա Աթայան	30000
6.	Թամարա Կարապետյան	30000
7.	Շուշանիկ Աղեկյան	20000
8.	Աէլիտա Գուխարյան	20000
9.	Սմբատ Դալլաքյան	20000
10.	Անուշ Խաչատրյան	20000
11.	Աշոտ Դոլուխանյան	20000
12.	Անիկ Թումասյան	20000
13.	Վարդուհի Արզումանյան	20000
14.	Քրիստինե Մաթևոսյան	20000
15.	Էլադա Դրբոյան	15000
16.	Էլլա Թորոսյան	15000
17.	Նվարդ Հարությունյան	15000
18.	Արմեն Թորոսյան	15000
19.	Լենա Աբրահամյան	15000
20.	Անահիտ Մելիքյան	15000
21.	Դիանա Գրիգորյան	15000

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ № 295

07-ը հոկտեմբերի 2021թ.
ք. ՆորՀաճն

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դավիթ Խաչատրյան ԱԶ-ն դիմել է իրգործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Տոռոզյան 13/1 հասցեում գտնվող 23ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություն ստանալու խնդրանքով:
Հաշվի առնելով, որ դիմումատուն ըստ 10310 անդորրագրի 2021 թվականի 2-րդ կիսամյանկի համար կատարել է Նոր Հաճն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 19-ի № 47-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Տալ *Դավիթ Խաչատրյան ԱԶ-ին* (վկայական 80.1178490) Նոր Հաճն համայնքի Տոռոզյան 13/1 հասցեում գտնվող 23քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություն 2021 թվականի 2-րդ կիսամյանկի համար:
2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հարցերով առաջատար մասնագետ՝ Խ. Թարվերդյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08-ը հոկտեմբերի 2021 թ. N 296
Նոր Հաճն

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ,48-րդ և 53-րդ կետերի պահանջներով՝ ***որոշում եմ.***

Ժաննա Նորիկի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական՝ N 2822750 / խանութը վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Ազատամարտիկների փողոց, թիվ 1/9 հասցե:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08-ը հոկտեմբերի 2021թ. N 297
Նոր Հաճն

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի ***որոշում եմ*** .

Մերուժան և Լիլիկ Մարկոսյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող /վկայական՝ 533873/, 07-006-0040-0127 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, 0.08 հա ընդհանուր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը հասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Շաս սյուր Ռոնի 3-րդ փողոց թիվ 1 հողամաս:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08-ը հոկտեմբերի 2021թ. N 298

Նոր Հաճն

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի ***որոշում եմ*** .

Մերուժան և Լիլիկ Մարկոսյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող /վկայական՝ 533874/, 07-006-0040-0107 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, 0.08 հա ընդհանուր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը հասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Շաս սյուր Ռոնի 3-րդ փողոց թիվ 3 հողամաս:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08-ը հոկտեմբերի 2021թ. N 299
Նոր Հաճն

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի ***որոշում եմ*** .

Նարինե Վելիբեկի Մկրտչյանին վարձակալության իրավունքով պատկանող,/ հիմք՝ ժառանգության վկայագիր՝ 642-20210624-84-5193023/ 0.1320 հա ընդհանուր մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը հասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Ա. Հարությունյան փողոց, թիվ 13 հողամաս:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08-ը հոկտեմբերի 2021թ. N 300
Նոր Հաճն

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի ***որոշում եմ*** .

Նարինե Վելիբեկի Մկրտչյանին վարձակալության իրավունքով պատկանող,/ հիմք՝ ժառանգության վկայագիր՝ 642-20210624-84-5193023/ 0.0576 հա ընդհանուր մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը հասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Ա. Հարությունյան փողոց, թիվ 15 հողամաս:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՒՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 301

08-ը հոկտեմբերի 2021թ.
Ք. Նոր Հաճն

ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 63-ՐԴ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՃԸՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 101-ՐԴ ԱՄՅԱԿՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով մասնագիտական առաջարկությունը՝ ***որոշում եմ.***

1. Հոկտեմբերի 10-ին՝ Նոր Հաճնի հիմնադրման 63-րդ և Կիլիկիայի Հաճընի հերոսամարտի 101-րդ ամյակների կապակցությամբ սփյուռքից ժամանած մի խումբ հաճնցիների Նոր Հաճն համայնքում հյուրընկալելու համար հատկացնել համայնքի 2021 թվականի բյուջեի գործառական դասակարգման 08.2.4 <Այլ մշակութային կազմակերպություններ> հատվածի տնտեսագիտական դասակարգման 4237 <Ներկայացուցչական ծախսեր> հոդվածից 240000 դրամ և 4239 <Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ> հոդվածից 24950 դրամ:
2. Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բադալյանին ապահովել միջոցառման ֆինանսավորումը՝ ըստ հաստատված նախահաշվի:
3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի հարցերով առաջատար մասնագետ Հ.Սիմոնյանի վրա:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

08.10.2021թ
Ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՍՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12-ը հոկտեմբերի 2021 թ. N 302
Նոր Հաճն

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 4-րդ մասի, 2019 թվականի նոյեմբերի 19-ի՝ 225-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 04-ի N 1023-Ն որոշման, 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Վիտալի Միքայելի Շիրինյանին և Բերսաբե Վասիլի Մելքոնյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ N 2492062 վկայական) Հարավարևելյան թաղամասի 4-րդ փողոցի թիվ 5 հասցեում գտնվող, 07-006-0049-0019 կադաստրային ծածկագրով՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 163.6 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը և 2.1 քառակուսի մետր մակերեսով քարե պարիսպը համարել օրինական:
2. Վերը նշված անձիք պարտավոր են ինքնակամ կառուցված 165.7 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունների օրինականացման համար, սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին մուծել 383761 (երեք հարյուր ութսուներեք հազար յոթ հարյուր վաթսունմեկ) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. <<ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ *ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՍԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ* >> 698-Ն որոշմամբ՝ հաստատել հատակագիծը՝ կադաստրային քարտեզում ուղղման համար :
4. Սույն որոշումն ուժի մեջ է իրավաբեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գագիկ Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14-ը հոկտեմբերի 2021թ. N 303
Նոր Հաճն

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի ***որոշում եմ*** .

Կարինե Գրիշայի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.07 հա ընդհանուր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը և շինությունները հասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Պ. Սևակի թաղամաս, 4-րդ փողոց, թիվ 33 հասցե:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 բ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՍՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14-ը հոկտեմբերի 2021 թ. N 304

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ Պ.ՍԵՎԱԿԻ ԹԱՂԱՄԱՍԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 33 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԻՆԵ ԳՐԻՇԱՅԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 12-ի թիվ 1004-Ն որոշման , հիմք ընդունելով Կարինե Գրիշայի Աբրահամյանի (ծնված՝ 01.01.1969 թ.) դիմումը, որով հայտնում է, որ Նոր Հաճն համայնքի Պ.Սևակ թաղամասի 4-րդ փողոցի թիվ 33 հասցեում գտնվող շինությունները կառուցվել են 1999 թվականներին, որոնց նկատմամբ իրավունք հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել ***որոշում եմ՝***

1.Վերականգնել Նոր Հաճն համայնքի Պ. Սևակի թաղամասի, 4-րդ փողոցի թիվ 33 հասցում գտնվող բնակելի տան (արտաքին մակերեսը՝ 173.79 քմ), ամառային խոհանոցի (արտաքին մակերեսը՝ 18.4 քմ), կաթսայատան (արտաքին մակերեսը՝ 4.0 քմ), պարիսպի (մակերեսը՝ 3.18 քմ) և դրանց կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 700.0 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ Կարինե Գրիշայի Աբրահամյանի սեփականության իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 700.0 քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի տան, շինությունների նկատմամբ:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների և դրանց կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասի հատակագծերը:
3. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարինե Գրիշայի Աբրահամյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ.Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15-ը հոկտեմբերի 2021 թ. N 305
Նոր Հաճն

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով ***որոշում եմ.***

1. Գեորգի Սոսի Օհանյանին տալ բնակելի տան և քարե պարիսպի շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Նոր Հաճն համայնքի Հարավարևելյան թաղամասի 2-րդ փողոցի թիվ 7 հասցեի հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15-ը հոկտեմբերի 2021 թ. N 306
Նոր Հաճն

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով ***որոշում եմ.***

1. Դավիթ Գրիշայի Հայկունուն տալ բնակելի տան և պարիսպի շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Նոր Հաճն համայնքի Հարավարևելյան թաղամասի 2-րդ փողոցի թիվ 1 հասցեի հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20-ը հոկտեմբերի 2021թ. N 307

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 4-րդ մասի, 2019 թվականի նոյեմբերի 19-ի՝ 225-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 04-ի N 1023-Ն որոշմամբ, Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Մեր Հասանխանի Սարուխանյանին սեփականության իրավունքով պատկանող 07-006-0049-0068 կադաստրային ծածկագրի տակ գտնվող / վկայական՝ 19102020-07-0068/ Հարավ-Արևելյան թաղամասի 2-րդ փողոցի թիվ 17 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 40.33 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը համարել օրինական:
2. Մեր Հասանխանի Սարուխանյանը պարտավոր է ինքնակամ կառուցված 40.33 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինության օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին մուծել 93404 (իննսուներեք հազար չորս հարյուր չորս) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. ՈՒԺը կորցրած ճանաչել Նոր Հաճն համայնքի ղեկավարի կողմից հաստատված 2020 թվականի նոյեմբերի 04-ի թիվ 20 շինարարության թույլտվությունը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է Մեր Հասանխանի Սարուխանյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ.Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20-ը հոկտեմբերի 2021թ. N 308
Նոր Հաճն

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-ԻՆ ՏՐՎԱԾ N 21 ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ) ՄԵՋ, 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19-ԻՆ ՏՐՎԱԾ N 16 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19-ԻՆ ՏՐՎԱԾ ԹԻՎ 238 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով թիվ 795-20210908-4-5367933 նոտարական նվիրատվության պայմանագիրը՝ ***որոշում եմ.***

1.Նոր Հաճն համայնքի ղեկավարի կողմից 2021 թվականի օգոստոսի 10-ին տրված N 21 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի)՝ «Կառուցապատող» հատվածի տողում ավելացնել «Գագիկ Ոսկանի Գևորգյան» բառերը:
2. Նոր Հաճն համայնքի ղեկավարի կողմից 2021 թվականի օգոստոսի 19-ին տրված N 16 շինարարության թույլտվության՝ «Տրված է կառուցապատող» հատվածի 1-ին տողում ավելացնել «Գագիկ Ոսկանի Գևորգյան» բառերը:
3. Նոր Հաճն համայնքի ղեկավարի կողմից 2021 թվականի օգոստոսի 19-ին տրված N 238 որոշման 1-ին կետում ՝ «Ոսկան Լյուդվիկի Գևորգյանին» բառերից հետո ավելացնել « և Գագիկ Ոսկանի Գևորգյանին» բառերով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 Հոկտեմբերի 2021 թվական N 309 - Ա

2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5 -ԻՆ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՏՐԱԿԱՐԳՈՎ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԵՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրք>> Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ ***որոշում եմ.***

2021 թվականի դեկտեմբերի 05-ին Նոր Հաճն համայնքի ավագանու անդամի համամասնական ընտրակարգով կայանալիք ընտրությունների անցկացման համար Նոր Հաճն համայնքում սահմանել հինգ ընտրական տեղամասային կենտրոններ՝ համաձայն կից հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

20-ը հոկտեմբեր 2021թ.
Ք.Նոր Հաճն

Հավելված 1

Նոր Հաճն համայնքի ղեկավար

2021 թվականի հոկտեմբերի 20-ի N 309-Ա որոշման

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Հ/Հ	Տեղամասային կենտրոնի գտնվելու վայրը	Հասցեն
1	Նոր Հաճնի թիվ 1 հիմնական դպրոց	Քաղաք Նոր Հաճն Չարենցի 20
2	Նոր Հաճնի մշակույթի տուն	Քաղաք Նոր Հաճն Թումանյան 4
3	Նոր Հաճնի թիվ 4 հիմնական դպրոց	Քաղաք Նոր Հաճն Շահումյան 1
4	Նոր Հաճնի թիվ 3 հիմնական դպրոց	Քաղաք Նոր Հաճն Տոռոզյան 11/3
5	<Նոր Հաճնի արվեստի դպրոց> ՀՈԱԿ	Քաղաք Նոր Հաճն Չարենցի 1/3

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Հավելված 2

Նոր Հաճն համայնքի ղեկավար

2021 թվականի հոկտեմբերի 20-ի N 309-Ա որոշման

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Հ/հ	Տեղամասային կենտրոնի գտնվելու վայրը	Հասցեն	Ընդգրկվող տարածքները
1	Թիվ 1 հիմնական դպրոց	Չարենցի 20	Ջոր. Անդրանիկի փողոցի թիվ 1,3,4,5,6,8բ շենքեր, Չարենցի փողոցի թիվ 31,33, շենքեր, Տոռոզյան փողոցի թիվ 14,16 շենքեր, Ջոր. Անդրանիկի տնակներ 7/5, 7/6, Չարենցի 20/4, Տոռոզյան 23, Չարենցի 20
2	Մշակույթի տուն	Թումանյան 4	Գայի փողոցի թիվ 3,5 շենքեր և տնակներ 16,17,18,19, Աջափնյա փողոցի (կամ Առափնյա, Աջափնյակ) թիվ 1,2,3 շենքեր, Չարենցի փողոցի թիվ 11,15,16,18,22, 29 շենքեր, Թումանյան փողոցի թիվ 5/3,7,9,11 շենքեր, Շահումյան փողոցի թիվ 3,5 շենքեր, Այգեգործական թաղամաս, Թումանյան 4,
3	Թիվ 4 հիմնական դպրոց	Շահումյան 1	Չարենցի փողոցի թիվ 13,17,19,21,23,25,27 շենքեր, Ազատամարտիկների (նախկինում՝ Սպանդարյան) փողոցի թիվ 1 շենք, Տոռոզյան փողոցի թիվ 6,8,10,12 շենքեր,Սարգիս Ջուլֆյան թաղամաս, Շահումյան 1
4	Թիվ 3 հիմնական դպրոց	Տոռոզյան 11/3	Պարգևաշեն 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ թաղամասեր (նախկինում՝ Հարավարևմտյան, Արևմտյան, Հյուսիսային թաղամասեր), Պարույր Սևակի թաղամաս (նախկինում՝ Հյուսիսարևմտյան թաղամաս), Իսահակյան փողոցի թիվ 1,2,3,4,5,6,7,8 շենքեր, Սպորտային փողոցի թիվ 1,2,3,4 շենքեր, Տոռոզյան փողոցի թիվ 1,3,5,9,15,17 շենքեր, Տոռոզյան 11/3
5	Արվեստի դպրոց	Չարենցի 1/3	Գայի փողոցի թիվ 1 շենք, Կայարան (կամ թաղ 1), Չարենցի փողոցի թիվ 1,2,3,4,5,6,7,10 շենքեր, Թումանյան փողոցի թիվ 3,5 շենքեր, Հարավարևելյան թաղամաս , Տոռոզյան փողոցի թիվ 3 տնակ, Շաս-սուղ-ղոն թաղամաս, Չարենցի 1/3

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 Հոկտեմբերի 2021 թվական N 310

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրք>> Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի դեկտեմբերի 05-ին Նոր Հաճն համայնքի ավագանու անդամի համամասնական ընտրակարգով կայանալիք ընտրությունների նախապատրաստման համար Նոր Հաճն համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացնել հատկյալ անվճար տեղերը՝

1.1 Տոռոզյան փողոցի թիվ 6 շենքի հարավային պատի վրա՝ 2-ական քառակուսի մետր :

1.2 Չարենցի փողոցի թիվ 14 շենքի հյուսիսային պատի վրա՝ 1-ական քառակուսի մետր :

1.3 Տոռոզյան փողոցի թիվ 14 շենքի հյուսիսային պատի վրա՝ 2-ական քառակուսի մետր:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դրվում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

3.Սույն որոշումը ուժի մեջ է 2021 թվականի դեկտեմբերի 05-ին Նոր Հաճն համայնքի ավագանու անդամի համամասնական ընտրակարգով կայանալիք ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցով հաստատված պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

20-ը հոկտեմբերի 2021թ.
Ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50, Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2021 թվականի N 311

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017թ. փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով համայնքի երեք բնակիչների դիմումները և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 210000 (երկու հարյուր տաս հազար) դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի ներքոհիշալ բնակիչներին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Սմբատյանի վրա:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

20.10.2021թ.
ք. Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2021 թվականի հոկտեմբերի 20-ի N 311 որոշման

ՑԱՆԿ
ԹԱՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Գումարի չափը՝ դրամ
1.	Հայարփի Խաչատրյան	70000
2.	Մանուշակ Ապրեսյան	70000
3.	Զաբելա Վարդանյան	70000

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 311/1

22-ը Հոկտեմբերի 2021թ.

Ք. Նոր Հաճն

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22- ԻՆ ԱՐՑԱԽՅԱՆ 44- ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԿՅԱՆՔՆԵՐԸ ՆՎԻՐԱԲԵՐԱԾ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐԻ ԲԱՑՄԱՆԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով մասնագիտական առաջարկությունը՝ ***որոշում եմ.***

1. Հոկտեմբերի 22-ի՝ Արցախյան պատերազում հայրենիքին կյանքները նվիրաբերած Նոր Հաճն համայնքի հերոսների հիշատակին նվիված հուշաղբյուրի բացման միջոցառման համար համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 08.2.4 <Այլ մշակութային կազմակերպություններ> հատվածի տնտեսագիտական դասակարգման 4239 <Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ> հոդվածից հատկացնել 23880 դրամ:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բաղալյանի ապահովել միջոցառման ֆինանսավորումը՝ ըստ հաստատված նախահաշվի:
3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ա. Սմբատյանի վրա:
4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

22.10.2021թ
Ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 Հոկտեմբերի 2021 թվականի N 312

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի N 59-Ա որոշման, Նոր Հաճն համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտի 4-ի N 10 կարգադրության և հիմք ընդունելով Նոր Հաճն համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 22-ի ուսումնասիրության ակտը, ***որոշում եմ.***

1. Նոր Հաճն համայնքում 2021 թվականի տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառել՝ սկսած յուրաքանչյուր ամսվա վճարի 50 տոկոսի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ս/թ նոյեմբերի 01- ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

26-ը Հոկտեմբեր 2021թ
Ք.Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի ղեկավարի 2021 թվականի
Հոկտեմբերի 26-ի N 312 որոշման

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱՀԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ

Հ/Հ	ԵՐԵԽԱՅԻ ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	ԿԻՐԱՌՎՈՂ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ %	ԾՆՆԴՅԱՆ ՕՐ, ԱՄԻՍ, ՏԱՐԵԹԻՎ
1	2	3	4
«ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ		
1	Մարիա Դավթյանը	50	24.07.2017

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐՀԱՃՆ<ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ № 313

26-ը հոկտեմբերի 2021թ.
ք. Նոր Հաճն

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաքել Բրուտյան ԱՁ-ն դիմել է իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Գայի 1 հասցեի տարածքում գտնվող 72 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով:
Հաշվի առնելով, որ ըստ 10523, 10524 անդորրագրերի դիմումատուն 2021 թվականի համար կատարել է Նոր Հաճն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի № 47-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Տալ *Առաքել Բրուտյան ԱՁ-ին* (վկայական № 01Ա085121) ՆորՀաճն համայնքի Գայի 1 հասցեի տարածքում գտնվող 72 ք.մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում իրականացնելու ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2021 թվականի համար:
2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հարցերով առաջատար մասնագետ Խ.Թարվերդյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը հոկտեմբերի 2021թ. N 314
Նոր Հաճն

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-ԻՆ ՏՐՎԱԾ ԹԻՎ 41 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Նոր Հաճն համայնքի ղեկավարի կողմից 2021 թվականի փետրվարի 17-ին տրված N 41 որոշման 1-ին և 2-րդ կետերում՝ «Կարեն Ավետիքի Հակոբյանին» բառերը փոխարինել « Ազնիվ Գառնիկի Հակոբյանին» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2021 թ. N 315

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Ձևակերպել կառուցապատող Ազնիվ Գառնիկի Հակոբյանի կողմից իրականացված Նոր Հաճն համայնքի Ս. Ջուլֆյան թաղամասի 7-րդ փողոցի թիվ 3 հասցեում գտնվող բնակելի տան և քարե պարիսպի կառուցման ավարտական ակտը (շահագործման թույլտվություն կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29-ը հոկտեմբերի 2021 թ. N 316
Նոր Հաճն

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով ***որոշում եմ.***

1. Վլադիմիր Հապետնակի Զոբանյանին տալ բնակելի տան, բացօդյա տաղավարի, օժանդակ շինությունների և պարիսպի շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Նոր Հաճն համայնքի Ս. Ջուլֆյան թաղամասի 1-ին փողոցի թիվ 3 հասցեի հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՒՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50, Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հոկտեմբերի 2021 թվականի N 317

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017թ. փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով համայնքի երկու բնակիչների դիմումները և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 140000 (հարյուր քառասուն հազար) դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի ներքոհիշալ բնակիչներին՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս. Բադալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:
3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Սմբատյանի վրա:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

29.10.2021թ.
ք. Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 317 որոշման

ՑԱՆԿ
ԹԱՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Գումարի չափը՝ դրամ
1.	Նվեր Մկրտումյան	70000
2.	Յուրիկ Սիմոնյան	70000

Համայնքի ղեկավար՝ Գ. Մաթևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 Հոկտեմբեր 2021թվականի N 318

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N920-Ն որոշմամբ,հիմք ընդունելով մասնագիտական եզրակացությունը **որոշում եմ.**

1.Նոր Հաճն համայնքի 2021 թվականի բյուջեից վերադարձնել փոխադրամիջոցի մասով առաջացած գերավճարները՝ համաձայն հավելվածի(հավելվածը կցվում է):

2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բադալյանին ապահովել վճարումը՝ համաձայն հավելվածի:

3.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, ֆինանսական,եկամուտների հարցերով Խ. Թարվերդյանին գույքահարկի բազայում կատարել համապատասխան փոփոխություններ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. ՄԹԵՎՈՍՅԱՆ**

2021 թ. Հոկտեմբեր 29
ք.Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2021թ.-ի հոկտեմբերի 29-ի
N 318 որոշման

ՑԱՆԿ

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ԵՏ ՎԵՐԱԴԱՐՁԻ

Հ/Հ	Անուն,Հայրանուն, Ազգանուն	Անձնագրային տվյալներ	Գույքահարկ	Բանկ և հ/հ	Վերադարձվող գումարի չափը՝դրամ
1	Միրաքյան Կոլյա Կամոյի	ՆՔ 010873313 տրված 26.11.2019թ 058-ից	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	Հայբիզնեսբանկ ՓԲԸ 1150036910414600	5916 /հինգ հազար ինը հարյուր տասնվեց /
2	Գեղամյան Յուրիկ Գեղամի	Անձ. AM0727993 տրված 16.05.2012թ 058-ից	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	Հայբիզնեսբանկ ՓԲԸ 1150036910414600	1682 / հազար վեց հարյուր ութսուներկու /
3	Նաղդալյան Արևիկ Սոսի	Անձ. AT0559507 տրված 08.09.2020թ 058-ից	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	Հայբիզնեսբանկ ՓԲԸ 1150036910414600	4182 /չորս հազար հարյուր ութսուներկու/

Համայնքի ղեկավար՝ Գ. Մաթևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 նոյեմբերի 2021 թվականի N 319

ԱՆՉԱՓԱՀԱՍ ՍԵԴԱ ԿԱՐԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, հիմք ընդունելով Նոր Հաճն համայնքի Սպորտային փողոցի 1-ին շենքի 21 հասցեի բնակչուհի Հասմիկ Վազգենի Հարությունյանի դիմումը, հաշվի առնելով Նոր Հաճնի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 08 նիստի արձանագրությունը, ***որոշում եմ.***

1. *Թույլատրել* Հասմիկ Վազգենի Հարությունյանին կնքելու իր անչափահաս դստերը՝ Սեդա Կարենի Հարությունյանին /ծնված՝ 11.05.2004թ./, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճն համայնքի Սպորտային փողոցի 1-ին շենքի 21 հասցեում գտնվող անշարժ գույքի՝ բնակելի տան 1/8-րդ բաժնեմասի օտարման գործարք:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հասմիկ Վազգենի Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ք.Նոր Հաճն
02.11.2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 նոյեմբերի 2021 թվականի N 320

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով Սպորտային փողոցի 3-րդ շենքի 11-րդ բնակարանի բնակիչ Սամվել Դավիթի Թորոսյանի դիմումը և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 70000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի բնակիչ Սամվել Դավիթի Թորոսյանի, հոր՝ Դավիթ Խաչատուրի Թորոսյանի թաղման ծախսերը հոգալու համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս. Բաղայանին՝ ապահովելու ֆինանսավորումը:
3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Սմբատյանի վրա:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

02.11.2021թ.
ք. Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ, ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 նոյեմբերի 2021 թվականի N 321

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ՍՈՍ ԵՎ ԱՐՍԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ԻՍԿ ՕՖԵԼԻԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ, 35-րդ և 37-րդ հոդվածների, Ընտանեկան օրենսգրքի 134-136-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման, հիմք ընդունելով Նոր Հաճն համայնքի Չարենցի փողոցի 6-րդ շենքի թիվ 11 բնակարանի բնակչուհի՝ Օֆելյա Մարգարի Գևորգյանի դիմումը՝ առանց ծնողական խնամքի մնացած անչափահաս թոռների՝ Սոս, Արսեն և Օֆելիա Արմենի Գևորգյանների նկատմամբ խնամակալություն սահմանելու և իրեն խնամակալ նշանակելու մասին, հաշվի առնելով խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 08 նիստի արձանագրությունը և երեխաների լավագույն շահերը՝ ***որոշում եմ.***

1. Անչափահասներ՝ Սոս /ծնված 14.10.2005թ./ և Արսեն /ծնված 26.01.2007թ./ Արմենի Գևորգյանների նկատմամբ սահմանել հոգաբարձություն, իսկ Օֆելիա Արմենի Գևորգյանի /ծնված 23.08.2008թ./ նկատմամբ սահմանել խնամակալություն և խնամակալ նշանակել տատիկին՝ Օֆելյա Մարգարի Գևորգյանին /ծնված 03.08.1957թ./:
2. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովին՝ իրականացնել վերահսկողություն Օֆելյա Մարգարի Գևորգյանի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Օֆելյա Մարգարի Գևորգյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ք.Նոր Հաճն
02.11. 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՍՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 նոյեմբերի 2021 թվականի N 322

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով Չարենցի փողոցի 27-րդ շենքի 2-րդ բնակարանի բնակիչ Հերմինե Սեյրանի Հայրապետյանի դիմումը և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 70000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի բնակիչ Հերմինե Սեյրանի Հայրապետյանին, մոր՝ Գոհար Կոլյայի Հայրապետյանի թաղման ծախսերը հոգալու համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս. Բադալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:
3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Սմբատյանի վրա:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

03.11.2021թ.
ք. Նոր Հաճն